

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

№	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԹԵՐԹ	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
1	Ընդհանուր տվյալներ	ԷՏ - 1	
2	Էլեկտրամատակարարման սկզբունքային սխեմա	ԷՏ - 2	
3	Էլ.ուժային սարքավորումներ, Առաջին հարկի հատակագիծ	ԷՏ - 3	
4	Էլեկտրալուսավորություն. Առաջին հարկի հատակագիծ	ԷՏ - 4	
5	Էլեկտրալուսավորություն. Երկրորդ հարկի հատակագիծ	ԷՏ - 5	
6	Էլ. ուժային սարքավորումների մասնագիր	ԷՏ - 6	
7	Էլ. լուսավորության սարքավորումների մասնագիր	ԷՏ - 7	

I.Ընդհանուր տվյալներ

Նախագծում դիտարկվել են Ծաղկավանի միջնակարգ դպրոցի էլ ուժային սարքավորումների և լուսավորության հարցերը : Աշխատանքային գծագրերի կատարման համար հիմք են հանդիսացել ճարտարապետաշինարարական գծագրերը, ջրամատակարարման և կոյուղու, օդափոխության գծագրերը:

Նախագծման համար Կգտագործվել են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը

. СНиП 2.08.02-89 - «Հասարակական շենքեր և կառույցներ»

. ПУЭ-2002 - « Էլ. սարքվածքների տեղակայման կանոններ »

. ВСН 59-88 - Բնակելի և հասարակական շենքերի էլ. սարքավորումներ.

. СНиП3.05.06-85 - «Էլեկտրատեխնիկական սարքավորումներ »

II.Էլեկտրատեխնիկական մաս

Նախագծում իրականացվել են հետևյալ մոնտաժային աշխատանքները:

- Էլ.ուժային և լուսավորության սարքավորումների տեղադրում

- Մայրագծային և խմբային գծերի անցկացում

Համաձայն ПУЭ-ի նախագծվող շինության սպառիչները հիմնականում պատկանում են

էլեկտրամատակարարման 3-րդ կարգին, բացառությամբ հակահրդեհային պոմպերի /աշխատող և ռեզեռվ/, որոնք տեղակայված են ջրի ճնշման մակարդակը ապահովելու նպատակով հրդեհամարման ժամանակ, վերջինների դեկավարումը իրականացվում է նաև հակահրդեհային վահանակից :

Կառույցի էլ. մատակարարումը իրականացվում է գոյություն ունեցող ցանցից: ԷԼ.էներգիայի բաշխման սխտեմը եռաֆազ է 380/220Վ լարման:

Էլ. էներգիայի բաշխման նպատակով առաջին հարկում աստիճանավանդակի տակ տեղադրվում է ուժային բաշխիչ վահան /ԲՎ/ , կոմպլեկտավորված համապատասխան քանակի ավտոմատ անջատիչներով:

Էլեկտրաէներգիայի բաշխումը սպառիչներին իրականացվում է առաստաղի տակով, պատերով ուղղաձիգ հատվածներում, ինչպես նաև կախովի առաստաղի ետնամասով, պղնձե հաղորդալարերով:

Կառույցի էլ. լուսավորության նպատակով նախատեսված են վահաններ համապատասխան քանակի միաբևեռ ավտոմատ անջատիչներով և պաշտպանիչ անջատման սարքերով: Վահանակները տեղադրվում են հատակից 1.5մ բարձրության վրա, ընդհանուր նշանակության վարդակները 1.2մ, իսկ անջատիչները 0.8մ բարձրությամբ, խոհանոցում համապատասխան տեղնուղեհական պահանջների:

Էլեկտրահաղորդագծերի մենտաժը իրագործել սանտեխնիկական ցանցի մոնտաժից հետո, մինչև ծածկի կարերի լցափակումը և միջնորմների հետ միաժամանակ: Կառույցում նախատեսված են հողանցման հպակով վարդակներ, իսկ խոնավ սենյակներում պաշտպանիչ անջատման սարքեր/ Y3O/:

Աշակերտների և անձնակազմի անվտանգ էվակուացիայի համար էլ. մատակարարման ընդհատման դեպքում հիմնական անցուղիներում և մուտքերում նախատեսված են «Ելք» ցուցանակներ:














Էլ. էներգիայի ընդհատվելու դեպքում վերջիներս ավտոմատ կերպով միանում են տեղային անկախ աղբյուրին /3 ժամյա աշխատանքի ակումուլյատորային մարտկոցներ/:


Նախագիծը իրականացված է համապատասխան գործող նորմերի և կանոնների:

Հզորությունների հաշվարկման աղյուսակ

№	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավոր	Դրվածք. հզորութ.	Кс	Պահանջ. հզորություն	Ծանոթություն
1	Էլ.ուժային սարքավորումներ	կՎՏ	7.21	0.7	0.85	ճկՎՏ հակահրդ. պոմպ
2	Էլ.լուսավորություն	կՎՏ	19.05	0.95	18.1	/մաքս. հզոր. մեջ չեն հաշվարկվում/
3	Հրդեհային ազդանշանում	կՎՏ	1.0		1.0	
	Ընդամենը օբյեկտով	կՎՏ	27.26	0.73	19.95	

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

	Բաշխիչ վահան ԲՎ		Լուսատու պատի շիկացման լամպերով
	Լուսավորության վահան /ԼՎ/		ԼՑ -Լույսային ցուցանակ «Ելք»
	Մագնիսական գործարկիչ /ՈՄ/		Վարդակ երկբևեռ հողանցիչով
	Ավտոմատ անջատիչ /ԱՄ/		Անջատիչ մեկսեղմականի
	Լյումինեսցենտային լուսատու 2x36վՏ հզորության		Անջատիչ երկսեղմականի
	Լուսատու առաստաղային շիկացման լամպերով		Անջատիչ հերմետիկ
	Լուսարձակ պատի,պաշտպանիչ ցանցով,հալոգեն դեղին լամպով 150Վտ		

			TGQ - 07 ԾԱՂԿԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՑՈՒՄ			
ՏՆՕՐԵՆ	Մ.ՀՈՒՄՆՅԱՆ		ԷԼԵԿՏՐՈՍԵՒՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ	ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
ՆԳՃ	Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ			ԱՆ	1	7
ՆԱԽԱԳԾԵՑ	Մ.ՍՈՖՅԱՆ					
			Ընդհանուր տվյալներ	«ՄԱՌ-Ա ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ		